

Ձ Մ Ր Ա Ն Գ Ի Ժ Ե Ր

Այս գիշեր, ձմրան ցուրտ գիշեր է: Դուրսը քամին ձիւնը աւելում ու պատե-
րին է ծեփում: Դուրսը ձմրան ցուրտ
գիշեր է: Բայց սենեակումս տաք կրակ
կայ, մի հանգիստ թիկնաթոռ կայ, ինչ-
չօն — չունս — ու ես:

Պատէն կախուած ժամացոյցը ինձ
ասում է որ ժամի տասն է. երբ տասներ-
կուսը լրանայ, տարին կը նորանայ. հի-
նը կ'երթայ նորը կը գայ: «Նոր տարի»
գիշեր է, ձմրան ցուրտ գիշեր: Նստած
եմ կրակի մօտ ու իւղոտ ճրագի թախ-
ծոտ լոյսով երազում եմ:

Խէչօն էլ, գլուխը թաթերին՝ պոչը
հանդարտ շարժելով, կիսախուփ աչքե-
րով կրակին է նայում: Նա էլ է երազում.
կարծես յիշում է մի ինչ որ ուրախ
դէպք, կարծես ասում է. — հէ՛յ օրեր...

Ես էլ անցած օրերը յիշում եմ. ես
էլ եթէ պոչ ունենայի, հանդարտ կը
շարժէի, ասելու համար, — հէ՛յ օրեր...

Քամին շարունակում է դրսում իր
բազմալար ողբը. նրա հետ, չրխկ-չրխկ,
հեծկլտում է պատուհանս: Պատէն կա-
խուած ժամացոյցը՝ թիկ-թակ, մըտ-
քերիս հետ չափ է պահում, թիկ-թակ...
Կրակի բոցերն ոչնչութիւնից դուրս գա-
լով, ոչնչութեան մէջ են անհետանում...
Ո՛ւ, ո՛ւ, դուրսը քամին է ողբում:

Բայց յանկարծ այս ձայներից վեր
լսում է մի ուրիշ ձայն, թրխկ-թրխկ.
պատուհանս են ծեծում:

Մի հիւ՛ւր է արգեօք, թէ կարկուտ է
գալիս: Թրխկ-թրխկ, աւելի ուժգին այս

անգամ: Այս ով որ է, շատ անհամբեր
մէկն է: Ու թողնելով հանգիստ թիկնա-
թոռս, մօտենում եմ պատուհանին ու
ակամայ հարցնում. — Ո՞վ է: Ոչ մի պա-
տասխան:

Բացի քամու ոռնոցից, ուրիշ ոչ-
ինչ չի լսում: Սակայն հագիւ թէ վե-
րադառնում եմ տեղս, ահա վերստին
թրխկ-թրխկ, նոյն տարօրինակ բախու-
մը ցատկել է տալիս ինձ ու մղում դէպի
պատուհան:

Այս անգամ «Ո՞վ է» այնքան բարձր
եմ բղաւում, որ ինքս էլ վախենում եմ
ու սկսում դողալ, երբ մի ձայն քամու
ողբի միջից ասում է.

— Ես եմ, մի յոգնած ճամբորդ, հե-
ռուից եկած հեռուն գնացող մի թափա-
ռական:

Առանց զարմանալու որ այս
ճամբորդը դուռիս փոխարէն պատու-
հանս է ծեծել, մէկ թափով բանում եմ
նրան: Յուրա քամին վզզում է ներս,
ճրագս հոգեվարքի մէջ է ընկնում պըլ-
պլալով:

— Շո՛ւտ արա, ներս մտի՛ր, ասում
եմ, քամին ճրագս կը հանգցնէ:

Բայց ինչ զարմանք, սենեակիս մի-
ջից մի ձայն պատասխանում է.

— Յուրա է, պատուհանը փակիր:
Մեքենաբար պատուհանը փակում
ու յետ եմ նայում: Մի նոր եւ աւելի մեծ
զարմանք: Սենեակս դատարկ է. այս-
ինքն, կրակից, թիկնաթոռից, ճրագից,
ժամացոյցից, ինչօից ու ինձանից բացի,

ոչ ոք: Իմ հեռուից եկած հեռուն զնացող հիւրը անհետացել է: Ես շատ վրդովուած դրութեան մէջ մօտենում եմ թիկնաթոռին եւ ուզում եմ նստել, երբ հէնց նոյն ձայնը ասում է.

— Ներողութիւն պարոն, աթոռը արդէն գրաւուած է:

Երրորդ դարձմանք, աթոռը դատարկ է, իսկ ձայնը ինձ ասում է որ գրաւուած է:

Ես ջղայնանում եմ ու պատասխանում.— Աթոռը դատարկ է ու ես կը նըստեմ:

— Ես արդէն նստած եմ վրան, պատասխանում է ձայնը, շատ էլ հանգիստ աթոռ է:

Թուքերիցս դուրս թռչող «Դու ո՞վ ես» գոռոցը, կոկորդումս ձայնափոխւում է, ու հազիւ թէ մի մղկրտոց է դուրս ծորում բերանիցս...

— Ես ով եմ, պատասխանում է ձայնը, ես մի յոգնած ճամբորդ եմ, հեռուից եկած հեռուն զնացող մի թափառական:

Իմանալով որ աթոռս բազմողր իմ հիւրն է, սիրտ եմ առնում ու բաւականին վստահ ձայնով պատասխանում.

— Այդ ամէնը դու արդէն ասել ես, ես քո անունն եմ հարցնում, անունդ ի՞նչ է:

— Մարդիկ ինձ շատ տարբեր անուններ են տալիս, դու ինձ քամի ես անուանում, բայց սխալ չհասկանաս, ես հասարակ քամի չեմ, ես գրազէտ քամի եմ: Իմանալով որ դու էլ բանաստեղծ ես, ուզեցի հետո գրականութեան մասին մի քիչ խօսել, դրա համար էլ պատուհանդ ծեծեցի:

Ես գիտէի որ մարդկանց յիսուն տոկոսը գրականութեամբ էր զբաղւում, բայց երբեք մտքովս չէր անցել որ քամին էլ կարող է գրազէտ լինել: Սակայն չուզելով հիւրս վիրաւորել ասում եմ.

— Գիշերները քեզ լսելով ես արդէն գիտէի որ գրականութեան մասին էիր խօսում. շատ ուրախ եմ որ եկար այս գիշեր. ես ինձ մենակ էի զգում. բայց ասա տեսեմ, դու գրականութեան ո՞ր ճիւղովն ես զբաղւում:

— Ես հէքեաթ եմ գրում, անշուշտ գիտես որ հէքեաթը գրականութեան բարձրագոյն սեռն է. հէքեաթն է որ իր գոյնզգոյն պատկերներով, առասպելական անկարելիութիւններով, երազել է տալիս մանուկներին, եւ վերջապէս հէքեաթն է, որ մոռացնել է տալիս դաժան դառնայ:

Այստեղ նա լռում է, բայց առաջ քան թէ ես կարողանամ մի բառ արտասանել, նա մի անտես տետրակ է բաց անում (որի շիկ-շիկոցը ես լսում եմ) եւ սկսում է բարձրաձայն կարդալ:

«ԳԱԶԱՆԸ»

Գիշերները՝ երբ Բենգալի վիթխարի անտառները նիրհում են, ու իրենց անդոհական երազներում զառանցում. երբ լուսինը մի որս փնտռող բազէի պէս ճախրում է վերը ու իր խոր նայուած քով զննում մրափող երկիրը. երբ նրա արծաթափայլ ճառագայթները մաղուելով ծառերի խիտ ճիւղերի միջից, լուսաշող մարգարիտներ են սփռում անտառի թաւուտ գետնի վրայ. երբ զազանների յաղթական ունոցը կամ նրանց մահուան մղկրտոցը անտառի խորունկ լուսթիւնն են խանդարում. այն ժամանակ ես՝ գիշերային զով քամին, հանդարտ չչնջում եմ ծառերի միջով ու իմ անվերջ ճամբան շարունակելով անցած դէպքերն եմ յիշում, ու յիշածս պատմում:

Քիշերն են ինձ լսել, ու տաւրի քիշերը հասկացել. դու որ լսում ես դուցէ հասկանաս...

Հարիւր հազար դարերով եմ ապրել, Աղամի մօրուքն եմ շոյել ու ժամանակի երեսը ապտակել: Տեսել եմ հզօր թշնամի բանակներ իրար դէմ կանգնած, տեսել եմ նրանց փոշիացած, ու նրանց փոշիները իրար եմ խառնել:

Ես ոչ ոքից վախ ունեմ: Բէնգալի ռաջան ու նրա ձիերը թամբող ծառան ինձանից միեւնոյն չափ բարիք են ստանում. երբ շոյեմ մէկը, միւսն էլ կը շոյեմ. վաղը երկուսն էլ կը փոշիանան, նրանց փոշիները իրար կը խառնեն:

Դարերով թափառելով աշխարհի վրայ, չառ հէքեաթներ եմ լսել, չառերը մոռացել, բայց այս մէկը որ քեզ պիտի պատմեմ երբեք չեմ մոռանալ:

Այս անտառի ափին Բուդղայից հազար տարի առաջ ապրում էր որսորդ Պանդուն, որի արձակած ամէն մի նետը մի կեանք էր անշնչացրել. այդ օրերին Պանդուն վաթսուն տարեկան էր բայց տեսքով երիտասարդ:

Նա չէր ամուսնացել, նա ոչ ոքի էր սիրել, որսը՝ նրա հաճոյքը, կեանքն ու աշխատանքն էր եղել: Հարուստ էր Պանդուն, նրա որսած գազանների մօրթերը հարստութիւն էին գիղել. բայց նա շարունակում էր որսալ, նա սիրում էր արիւնաթաթախ վէրքեր տեսնել, սիրում էր տեսնել թաւալուող վիրաւոր գազաններ. եւ չգիտէր որ ինքն էլ գազան էր դարձել:

Նա ապրում էր անտառի ափին մի տնակի մէջ, իր միակ ընկերոջ, իր հաւատարիմ շանը հետ: Ամէն առաւօտ Պանդուն ու իր շունը որսի էին գնում, ու ամէն իրիկուն մի անշունչ գազան քարշ տալով վերադառնում. այսպէս էր ապրում Պանդուն, ու այսպէս էլ մնաց՝ մինչեւ մի օր...

Մի օր, մի առաւօտ, աղեղն ու նետերը ուսին, կարծ բայց սուր նիզակը ձեռքը, շանը հետ խաղալով նա անտառ

մտաւ: Մինչեւ կէսօր այս ու այն կողմ թափառեց, բայց որսը չերեւաց, ու Պանդուն պատրաստուում էր հանգստանալու, երբ դիմացի թուփերից դուրս խոթեց մի վարազ ու կանգ առաւ մի քանի քայլ հեռուն: Հաւատարիմ շունը խկոյն յարձակուեց գազանի վրայ, որը խոխոաց, յետ-յետ քաշուեց, ու իր հերթին յարձակուեց շան վրայ: Այն ժամանակ Պանդուն բարձրացրեց նիզակը, եւ իր ամբողջ ուժովը նետեց վարազին. սակայն այդ վայրկեանին անակնկալը պատահեց, Պանդուի ձեռքը դողաց, ու նիզակը իր հաւատարիմ շունը գամեց գետնի հետ:

Պոզը աներեւութացաւ: Եւ Պանդուն պիտեցաւ որ նա մի Աստուած էր, որ կերպարանափոխուած եկել էր իրեն իմաց տալու՝ թէ ամէն կեանք մի կեանք է, հաւասար մի ուրիշ կեանքի...: Պանդուն սոսկումով էր նայում իր իսկ ձեռքով բացած վէրքի վրայ, որից ծորում էր կարմիր արիւնը, եւ որի մէջ թաւալում էր իր հաւատարիմ ընկերը:

Այստեղ նա լուում է ու թեթեւ հազում, որով ճրագս նորից անհանգիստ պլպլում է:

— Ի՛հ, ի՞նչպէս էր:

Այս անգամ ես եմ հազում, ըհը՛, ըհը՛, չառ լաւ էր, միտքդ էլ լաւ հասկացայ, ուզում ես ասել որ հաւատարիմ բարեկամներն են միշտ ունակոյի լինում:

Մի քանի բոպէ լուռ մնալուց յետոյ, եզրափակում է.

— Ես քեզ բանաստեղծ էի կարծում, մնաս բարով, պատուհանը բաց:

— Բարով եկար:

Պատուհանը բաց եմ անում եւ կրկին փակում: Ի՛նչ տգէտ քամի, իր գլուխը ինքն էլ չի հասկանում:

Այս մտածմունքով էլ նստում

եմ թիկնաթուխ վրայ (որը մտերմաբար ճոճուում է) ու խնայում: Կրակի մօտ քնած է նա. տեսնես ինչեր է երազում...: Երանի՜ քեզ, ասում եմ բարձրաձայն, երանի՜ քեզ խնայ, որ գլխահանութեան մասին գաղափար չունես: Այս բառերը հաղիւ եմ արտասանել, որ խնայ արթնանում է, ոտքերի վրայ նստում ու յստակ ձայնով ասում.

— Ի՛նչպէս թէ գրականութեան մասին գաղափար չունեմ, ես մեծ մարդկանց կենսագրութիւնն եմ գրելու, իմ յուշերն արդէն գրել եմ:

Այս ասելով նա մի գաղտնի տեղից դուրս է բերում մի կապոց թուղթ ու ձեռքերիս մէջ դնում: Դանդաղօրէն կապոցը բանում եմ ու սկսում կարդալ:

«ԻՄ ԿԵԱՆՔԸ»

«Ես մի շուն եմ, ձախ ոտքս էլ կաղ. եթէ փողոցում ինձ հանդիպես, կարելի է վրաս մի քար նետես:

Եօթը երկար տարիներ ու մի կառք, անցել են իմ բազմաչարճար մարմնի վրայով ու նրան թողել անմազ ու կաղ:

Ես պատիւն ունեցայ ծնուելու Թէհրան քաղաքում, սովի տարին: Երեք ամսական էի երբ երբ մայրս անհետացաւ: Ընդհանուր կարծիքն այն էր, որ մարդիկ կերան նրան...: Չգիտեմ թէ ինչպէս դուրս պրծայ սովի ու մարդկանց ճանկերից. բայց գիտեմ որ սովը ու մարդկանցից շատերը գնացին, ու ես մնացի, ի հարկէ կմախքացած վիճակի մէջ...:

Այդ օրերից մէկում, հանդիպեցի կեանքիս ամենազոքախոս դէպքին:

Գարնան մի պայծառ օր էր: Ծառերը ծաղկում էին, թռչուններն երգում, ու ես էլ դռնէ դուռ ընկած ուտելու մի բան էի փնտռում, երբ, ի՛նչ զարմանք,

տասը քայլ հեռու ինձ նայում էր մի մըսոտ ոսկոր: Տասը քայլը մի քայլ արի ու ոսկորը բերանումս էր: Բայց այդպէսով չվերջացաւ գործը. պէտք էր մի ծածուկ տեղ դնել. այդ օրերում քաղցած շուները շատ էին, ու հաղիւ էի շուրջս նայել, երբ չորս կողմից յարձակուեցին վրաս: Չպարծենամ, շատ լաւ պաշտպանուեցի, շատերը մինչեւ օրս ապացոյցք կրում են իրենց վրայ. բայց շատ էին, ու նրանից մէկը ոսկորը խից ու փախաւ. ամբողջ խումբը հետը սանելով:

Ես շուարած մնացել էի, երբ լսեցի մի զանգի ձայն, յետ նայեցի, բան չտեսայ, գիտեմ միայն որ օդի մէջ մի քանի պոռոյտ կատարեցի, ու մի շատ ծանր բան անցաւ ոտքիս վրայով: Վերջը հասկացայ որ մի կառք էր: Միակ միթարանքս այն էր, որ ոտքս ճգմողը վէղերի կառքն էր ու վէղերի ծանրութիւնը մեծ դեր էր ունեցել այդ գործողութեան մէջ:

Երեք տարի կաղ ոտքս յետեւիցս քաշ տալով, հասայ վերջապէս կեանքիս ամենէն ուրախ դէպքին: Չմեռ էր. ձիւնն ու խաւարը պատել էին Թէհրանը:

Գիշերուայ ժամի տասը հաղիւ կը լինէր, լուռ փողոցներում անցորդներ չկային, ես ու կաղ ոտքս քնելու տեղ էինք փնտռում. երբ յիշեցի, որ քաղաքից դուրս մի անդուռ խրճիթ կար, ուր հաւաքում էին դէրվիշները:

Թէեւ գիշերները քաղաքի հսկայ դռները փակ էին, բայց գիտէի նաեւ, որ քիչ հեռուն պատերի մէջ այնպիսի մեծ ծակեր կային, որ Շահնշահի բանակն անգամ կարող էտողան ց կատարել նրանց միջով:

Այս ամենքի մասին մտածելով, գլուխս կախ, լնդլնգալով գնում էի, երբ ոտքի ձայներ լսեցի ու նայեցի վեր. մի քանի քայլ հեռու, կանգնած էր մի

մարդ. նա էլ ինձ էր նայում: Նա սկսեց մինչև այսօր...»:

Հասցնել ու ձեռքովը կանչել:

Ես զարմացալ նախ, ապա մտածեցի որ այս մարդը կամ խենթ է, կամ հարբած. փողոցում մի շան հանդիպել, քար չհետել, աքացի չհասցնել, այս խենթի կամ հարբածի գործ էր:

Ինչ եւ իցէ, պոչս հանդարտ շարժելով մօտեցալ նրան. նա գլուխս շոյեց, մի կտոր հաց տուեց ու շարունակեց իր ճամբան:

Ես նրան հետեւեցի ու հետեւում եմ

Խէչօն, սենեակիս լուծիւնը խանգարում է, հարցնելով.

— Էհ, ի՞նչպէս էր:

— Արժէք չունի:

— Ի՞նչու:

— Որովհետեւ դու մի շուն ես:

Յ. ԿՈՍՏԱՆԴԵԱՆ

Փարիզ 1931

Տ ա դ

Ծաղկաւերմայ լընակի մը թովհանփովը առինփնող
Աչքերուդ մէջ, ես սուգուեցայ ու կը սուգուիմ օրէ օր.
Ան կը լայննայ, կը ծաւալի ու կը սփռէ անբաժնի
Ըզգացումներ լուսաթրոփչ կոյս սրտերու հեշտօրօր:

Եւ անճատուր այդ հեշտանփի մեղրածորան ոլորտին,
Նիւթէն հեռու, կեանքէն հեռու, եթերշաղախ սէր կ'ըլլամ,
Սէրէն ալ վեր, սիրոյ ոգին կը դառնամ, վեր աշխարհին.
Փոքր ու տըգեղ ապրումներէն, բաղձանքներէն դառնա-
համ:

Շուշանները ինձ թեւ կուտան ու արծիւներն ալ թռնիչ,
Ու կը ֆախրեմ ու կը ֆախրեմ իմ երազիս լայն ֆամբով,
Քու հոգիիդ ու էութեանդ ալքերուն մէջը դիւրիչ,
Հըմայփներու բոցերուն տակ, սիրածորան հեշտանփով:

Ու ես դարձած զըւարթուն մը եղեմներու պարտէզին,
Ծաղկափրթիք անուշաճտ ածուներու երկայնքէն,
Կուգամ ըմպել գուլալ ջուրիդ արծաթափայլ ակունքին
Անգայտ ու ջինջ հեղուկը լոյս, որ կը հոսի քու աչքէն:

ՆԱԶԵՆԻ